Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան հիմնադրամ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Սաների կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտումը եւ ուսումնադաստիարակչական աշխատանքների ճիշտ կազմակերպումը

Կատարող՝ դաստիարակ՝ Տաթևիկ Միրզախանյան

<<Արտիմետի մանկապարտեզ>> ՀՈԱԿ

Ղեկավար՝ Իրինա Պոնոմարենկո

ԵՐԵՎԱՆ- 2023թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3

Տեսական մաս

Հինահարցի շուրջ մասնագիտական գրականության վերլուծություն

1.1 Ներառական կրթության էությունը---------- ----6

1.2 Ներառական կրթության առանձնահատկությունները

նախադպրոցական ուսումնական հաստատությունում ----------8

1.3 Սաների կրթության եւ զարգացման առանձնահատու կպայմանների կարիքի բացահայտումը եւ ուսումնադաստիարակչական աշխատանքների ճիշտ կազմակերպումը և գնահատումը ----------12

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԱՍ----------18

Եզրակացություն----------20

Օգտագործված գրականության ցանկ----------21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«**Ներառական կրթություն**» եզրույթն սահմանվում է «ներառում» բառով, որը փոխառված է ֆրանսերեն լեզվից: Լատիներենից այն թարգմանվում է որպես «ներգրավում եմ», «ընդգրկում եմ»: Այսպիսով, եզրութաբանորեն ներառական կրթություն նշանակում է կրթություն, որի դեպքում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման շեղումով երեխաները «ընդգրկվում» են զանգվածային կրթական կազմակերպության մեջ[1]:

Այսօր այնքան հաճախ է խոսվում ներառական կրթության,կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների և նրանց հիմնախնդիրների մասին, որ թվում է, թե ամեն ինչ ասված է: Սակայն, ամեն անգամ յուրաքանչյուր կոնկրետ երեխայի հետ հանդիպումից հետո հարց է ծագում՝ ի՞նչ գիտենք հենց այս երեխայի, նրա ներաշխարհի, հույզերի, կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների մասին, որոնց կարիքը նա ունի, և վերջապես, ինչպիսի՞ն է նա՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխան:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձը ունի ուսուցման հետ կապված դժվարություններ, այդ թվում՝ զարգացման ֆիզիկական կամ մտավոր առանձնահատկություններ, որի կողմից հիմնական ծրագրերը յուրացնելու համար անհրաժեշտ են կրթության առանձնահատուկ պայմաններ:

Թեմայի արդիականությունը. Ներկա ժամանակներում լուրջ խնդիրներից է համարվում երեխաների և հատկապես կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԶԱՊԿ) ունեցող երեխաների զարգացմանն ու

[1]https://hy.wikipedia.org/wiki/%D5%86%D5%A5%D6%80%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6

կրթությանը խոչընդոտող հանգամանքները: Զարգացման առանձնահատկություններ ունեցող երեխաների կրթությունը կազմակերպելու համար լավագույն լուծումն է ներառական կրթությունը:

Ներառական կրթությունը նախադպրոցական ուսումնական հաստատություններում ենթադրում է, որ երեխաներն ընդունեն և արժևորեն բազմազանությունը հենց մանկուց, որն էլ իր հերթին հիմք կհանդիսանա ներառական հասարակության ձևավորման համար: Այս նկատառումից ելնելով՝ կարևոր է, որ ՆՈՒՀ-երի մանկավարժները և բոլոր աշխատակիցները հստակ պատկերացնեն և ընդունեն «բազմազանություն» հասկացությունը: Գաղտնիք չէ, որ առանց ամուր հիմքի չի կարող լինել վստահելի կառույց: Ներառականության համատեքստում այս հիմքը նախադպրոցական կրթությունն է: Ներառական նախադպրոցական կրթությունը երեխայակենտրոն է:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել սաների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքները և ուսումնադաստիարակչական աշխատանքները ճիշտ կազմակերպելը

Հետազոտության խնդիրները:

1. Հիմնավորել ի՞նչ է ներառական կրթությունը
2. Ներկայացնել այն նախապայմանները, որոնք անհրաժեշտ են նախադպրոցական հաստատություններին, որպեսզի կարողանան ճիշտ կազմակերպել կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների զարգացման ու կրթական գործընթացը:
3. Բացահայտել մանկապարտեզում ներառական կրթության վերաբերյալ մոտեցումները և դաստիարակի կողմից կիրառվող մեթոդները:
4. ՈՒսումնասիրել երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման և նախադպրոցական կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների

տրամադրման հետ կապված հարաբերությունները:

Հետազոտության մեթոդները: Հետազոտության ընթացքում կիրառվել է դիտարկման, զրույցի, վերլուծության, խաղային մեթոդները:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը կազմված է ներածությունից, տեսական և հետազոտական մասից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից: Հտեազոտական աշխատանքը կազմված է 21 էջից:

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ

Հիմնահարցի շուրջ մասնագիտական գրականության վերլուծություն

1.1 Ներառական կրթության էությունը

Հանրակրթության ոլորտում ներառական կրթության իրականացման նախաձեռնությունը սկսվել է 2001 թվականից՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության և «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության միջև ստորագրված փոխըմբռնման հուշագրի հիման վրա: 2005 թվականին՝ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» ՀՀ օրենքի ընդունումից հետո, ներառական կրթությունը դարձավ պետական քաղաքականություն[2]: 2014 թ. դեկտեմբերի 1-ին «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումով Հայաստանի Հանրապետությունը ամրագրեց համընդհանուր ներառական կրթության անցման քաղաքական կամքը. «Հայաստանի Հանրապետությունը համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք»: Միաժամանակ, ուժը կորցրած ճանաչվեց 2005 թ. «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» օրենքը և ապահովվեց միասնական իրավական դաշտ ներառական կրթության իրականացման համար[3]:

Ներառական կրթությունը յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով

[2] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=154530
[3] Ներառական կրթություն. Ուսումնամեթոդական ձեռնարկ. -Երևան: 2017. Էջ3:

սահմանված արդյունքի ապահովումն է[4]:

Ներառական կրթության արդյունավետությունը կախված է համագործակցությունից և թիմային աշխատանքից: Ներառական կրթության իրականացման կարևոր նախապայմաններից է համագործակցային աշխատանքների կազմակերպումը, քանի որ թիմում կարող են լինել անդամներ, ովքեր տարբերվող և զարգացման այս կամ այն առանձնահատկություն ունեցող երեխաների հետ աշխատելու փորձ չունեն, ուստի մասնագետների հետ փորձը կիսելը և համատեղ աշխատանքների պլանավորումը հնարավորություն կտան աշխատանքներն իրականացնել առավել արդյունավետ: Համագործակցային աշխատանքներում կարևոր դեր ունի ծնողը, հատկապես՝ նախադպրոցական տարիքում: Անհրաժեշտության դեպքում թիմի անդամ կարող են դառնալ նաև համայնքում գործող այլ կառույցների մասնագետներ, որոնց ներդրումն այս աշխատանքներում կարող է զգալի փոփոխությունների և ձեռքբերումների հիմք հանդիսանալ: Կրթությունն առավել արդյունավետ և նպատակային դարձնելու համար

կարևոր է, որ մանկավարժները թիմային համագործակցային աշխատանքի միջոցով (գործընկերներ, ծնողներ/խնամողներ, բժիշկներ, համայնքում գործող այլ կազմակերպությունների մասնագետներ) հայտնաբերեն այն խոչընդոտները, որոնց բախվում են երեխաները զարգացման և կրթություն ստանալու գործընթացում, քանի որ ներառական կրթությունը ենթադրում է յուրաքանչյուր երեխայի կարիքներին համապատասխան պայմանների ապահովում, ապա չկա մեկ «բաղադրատոմս», որն

արդյունավետ լինի բոլոր երեխաների ու դեպքերի համար, ուստի յուրաքանչյուրի դեպքում պետք է պլանավորել, թե ինչ անել և ինչպես նպաստել կոնկրետ երեխայի զարգացմանը և կրթության կազմակերպմանը:

Ներառական կրթության գլխավոր գաղափարախոսությունն այն է, որ բոլոր երեխաները անկախ ֆիզիկական, հոգեկան մտավոր և զարգացման այլ առանձնահատկություններից, անպայման պետք է իրենց հասակակիցների հետ

[4] Ներառական կրթություն. Ուսումնամեթոդական ձեռնարկ. -Երևան: 2017. էջ4:

ներառվեն կրթության և դաստիարակության համակարգ: Ներառումը բազմակողմանի գործընթաց է: Այն արտացոլում է սոցիալական, իրավական, տնտեսական, հոգեբանական և մանակվարժական հիմնախնդիրների համադրություն: Ներառական կրթության իրականացման ինչպես նաև, կառավարման գործընթացը հանդիսանում է ինչպես զարգացած, այնպես էլ՝ զարգացող երկրների սոցիալական և կրթական քաղաքականության զարգացման առաջին ուղղություններից:

ՄԱԿ-ի և ՀԱԿ (համաշխարհային առողջապահական կազմակերպության) փորձագետների կարծիքով հատուկ կարիքներով անձինք կազմում են երկրի բնակչության 10%-ը, (մոտավորապես 500մլն մարդ), որոնցից ավելի քան 150 մլն-ը երեխաներ և դեռահասներ են: Իրավիճակը կարող է փոխել այն գիտակցումը, որ բոլոր մարդիկ ունեն հավասար իրավունքներ անկախ ֆիզիկական, մտավոր և հոգեկան խնդիրներ ունենալուց: Հենց սա է ներառական կրթություն ծրագրի գաղափարախոսությունը: Ներառական կրթության համընդհանուր գաղափար

ստեղծելիս և ներմուծելիս հարկավոր է հաշվի առնել տվյալ հասարակության առանձնահատկությունները:

1.2 Ներառական կրթության առանձնահատկությունները նախադպրոցական ուսումնական հաստատությունում

Ներառական կրթությունը նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման համար առավել նպաստավոր միջավայր ապահովելու լավագույն տարբերակներից մեկն է, ինչը հնարավորություն է տալիս ծանոթանալ բազմազան միջավայրին, զարգացնել միջանձնային փոխհարաբերություններ կառուցելու կարողություններն ու հաղորդակցման հմտությունները:

Նախադպրոցական կրթության պայմաններում ներառական կրթության հիմնական նպատակը բոլոր երեխաների հանդեպ հարգանքի ձևավորումն է՝ ճանաչելով և գնահատելով նրանց բազմազանությունը: Երեխաները, կրթվելով բազմազանության միջավայրում, ունենում են տարաբնույթ ձեռքբերումներ, դրական լիցքեր են ստանում

մեկը մյուսից, լրացնում են միմյանց՝ խճանկարի հավաքվող պատկերի սկզբունքով կերտելով շրջապատող աշխարհի վերաբերյալ նոր, ամբողջական պատկեր:

Ներառական կրթության իրականացվող ուսումնական գործունեության հիմքում այսօր կարևորվում է կրթական համակարգերի հարմարեցումը բոլոր սովորողների կարիքներին ու առանձնահատկություններին, որտեղ մանկավարժի ուշադրության կենտրոնում սովորողների բազմազանությունն է:

Ներառական նախադպրոցական կրթությունը երեխայակենտրոն է: Ներառական նախադպրոցական կրթությունը պետք է ապահովի յուրաքանչյուր երեխայի զարգացման համար անհրաժեշտ համապատասխան պայմաններ: Սա նշանակում է, որ մենք՝ մանկավարժներս, պետք է գիտելիքներ ունենանք այն մասին, թե ինչ կարող է և դեռ չի կարող անել յուրաքանչյուր երեխա՝ ելնելով ինչպես երեխաների զարգացման տարիքային օրինաչափություններից, այնպես էլ՝ կոնկրետ երեխայի զարգացման ընթացքից: Կարևոր է, որ մանկավարժներն իրենց աշխատանքները պլանավորելիս անպայմանորեն հավշի առնեն այս գիտելիքները և տեղեկատվությունը: Նախադպրոցական տարիքում երեխաների զարգացման և կրթության ուղղությամբ իրականացված աշխատանքներն անմիջականորեն անդրադառնում են երեխայի հետագա զարգացման և կրթական ուսումնառության նախապատրաստման վրա: Այս տարիքային խմբում երեխայի զարգացմանը միտված և իր առանձնահատկություններին համապատասխան զարգացնող միջավայրի և կրթության կազմակերպումը խիստ կարևոր է ինչպես ծնողների, այնպես էլ ՆՈՒՀ-երի կողմից[5]: Հայաստանում կրթության զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ԿԶԱՊԿ ունեցող անձանց կրթության մասին օրենքն ընդունվել է 2005թ-ին, որից հետո ներառական կրթությունն ընդգրկվել է

[5] Ինչպես խթանել ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում, Մեթոդական ուղեցույց, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Երևան, 2020 էջ8

կրթության զարգացման պետական ծրագրերի մեջ: Օրենքի նպատակն է հանրակրթական հաստատություններում ստեղծել առանձնահատուկ պայմաններ՝ ապահովելու համար համատեղ կրթություն՝ ներառելով նաև ֆիզիկական, մտավոր և այլ առանձնահատկություններ ունեցող երեխաներին, քանի որ Հաշմանդամություն ունեցող անձանց և Երեխաների իրավուքների մասին Կոնվենցիաներում հստակ ամրագրված է, որ յուրաքանչյուր երեխա՝ անկախ ռասսայական, լեզվական, կրոնական պատկանելությունից, հաշմանադամություն ունենալու և այլ կարգավիճակներից՝ իր համայնքում, իր նախընտրած կրթական հաստատությունում կրթություն ստանալու իրավունք ունի:

Ներառական կրթությունը ենթադրում է, որ կրթական համակարգը պետք է հարմարվի ԿԶԱՊԿ ունեցող երեխային, այլ ոչ թե հակառակը, իսկ կրթական հաստատություններում պետք է այնպիսի մեթոդներ կիրառվեն, որոնք հաշվի կառնեն յուրաքանչյուր երեխայի առանձնահատկությունները, ընդունակություններն ու կարողությունները:

Ներառական կրթության նպատակն է տարբեր առանձնահատկություններ ունեցող երեխաների նկատմամբ ձևավորել հարգանք: Այն հնարավորություն է տալիս ԿԶԱՊԿ ունեցող երեխային ստանալ վաղ զարգացման համար խիստ կարևոր նախադպրոցական կրթություն՝ իր հասակակիցների միջավայրում, և դառնալ հասարակության լիիրավ անդամ: Երեխան սովորում է հարմարվել սոցիալական կյանքին, սովորում է վարքի նորմեր և արժեքներ, որոնք կօգնեն նրան շփվել շրջապատի մարդկանց հետ: Այսինքն՝ ներառական կրթությունը ԿԶԱՊԿ ունեցող երեխաների սոցիալականացման միջոց է:

Ներառական կրթության դեպքում մանկավարժները պետք է առաջնորդվեն ոչ միայն նախադպրոցական մանկավարժության մեթոդներով ու սկզբունքներով, այլ նաև՝ առանձին երեխաների հետաքրքրություններով: Նրանք պետք է կարողանան, նախ և առաջ հայտնաբերել այն

խոչընդոտները, որոնք խանգարում են երեխայի զարգացման ու կրթություն ստանալու գործընթացին, այնուհետև մշակեն այնպիսի ուսումնական, մեթոդական պլաններ, որոնք ուղղված կլինեն այդ խոչընդոտների հաղթահարմանը:

Մանկավարժները պետք է գիտելիքներ ունենան ոչ միայն երեխայի զարգացման տարիքային օրինաչափությունների մասին, այլ նաև յուրաքանչյուր երեխայի զարգացման առանձնահատկությունների մասին, որպեսզի կարողանան ապահովել յուրաքանչյուր երեխայի զարգացման համար անհրաժեշտ համապատասխան պայմաններ:

Որպեսզի նախադպրոցական հաստատության մանկավարժը ճիշտ կազմակերպի յուրաքանչյուր երեխայի զարգացման և կրթության գործընթացը, նա պետք է նախ և առաջ բացահայտի յուրաքանչյուր երեխայի կարողությունները, հմտություններն ու հնարավորությունները, իսկ դա հնարավոր է դիտարկման միջոցով:

Դիտարկումը հնարավորություն է տալիս բացահայտել երեխայի ուժեղ կողմերը, հետաքրքրությունները, նրա գիտելիքներն ու կարողությունների աստիճանը: Բացահայտել այն մոտիվացիոն գործոնները, որոնք խթանում են սովորելու և զարգանալու գործընթացը: Դիտարկման միջոցով մանկավարժը բացահայտում է, թե ինչպիսի վարք է դրսևորում յուրաքանչյուր երեխա՝ տվյալ միջավայրում, շրջապատում ու իրավիճակում: Կրթության զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի նախադպրոցական զարգացումն ու կրթությունը ճիշտ կազմակերպելու համար, անհրաժեշտ է բացահայտել երեխայի ուժեղ կողմերը, կարողություններն ու հնարավորությունները, և դրանք հիմք դարձնելով՝ պլանավորել զարգացման և կրթական գործընթացը: Զուգահեռ պետք է աշխատել դժվարությունների և խնդիրների հաղթահարման ուղղությամբ:

1.3 Սաների կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտումը եւ ուսումնադաստիարակչական աշխատանքների ճիշտ կազմակերպումը և գնահատումը

Ներառական նախադպրոցական կրթությունը հենվում է երեխայի ուժեղ կողմերի վրա: Նախկինում երեխաների զարգացման չափորոշիչները օգտագործվում էին հայտնաբերելու համար ուշացումներն ու դժվարությունները և պարզելու, թե ինչ չեն կարող անել երեխաները: Այս մոտեցումը հիմնված է հաշմանդամության ճանաչման բժշկական մոդելի վրա, որի դեպքում չենք բացահայտում ու արձանագրում, թե ինչ կարող են անել երեխաները, և ինչն է նրանց հետաքրքրում: Սակայն երեխայի ուժեղ կողմերի և արդեն ձևավորված կարողությունների բացահայտումը կրթության արդյունավետ կազմակերպման համար ամենակարևոր գործոններից են: Որպեսզի նախադպրոցականի զարգացումը և կրթության կազմակերպումը լինեն առավել նպատակային և արդյունավետ, անհրաժեշտ է ուշադրությունը տեղափոխել երեխայի անկարողություններից նրա կարողությունների՝ «ուժեղ կողմերի» վրա: Կարևոր է տարբեր իրավիճակներում և միջավայրերում դիտարկել ու գտնել երեխաների ուժեղ կողմերը, հետաքրքրությունները և հնարավորությունները: Սա ամբողջովին փոխում է աշխատանքի մոտեցումը. բացակայող կարողությունը, գիտելիքը կամ դժվարությունը փնտրելու փոխարեն անհրաժեշտ է կենտրոնանալ այն կարողությունների ու պոտենցիալ հնարավորությունների վրա, որոնք կարող են հիմք հանդիսանալ երեխայի հետագա զարգացմանը խթանելու և կրթությունը պլանավորելու համար: Սա բնավ չի նշանակում, որ դժվարությունները, խնդիրները կամ մարտահրավերներն անհրաժեշտ է անտեսել, այլ հիմնվելով երեխայի կարողությունների վրա՝ անհրաժեշտ է աշխատել նրա դժվարությունների և խնդիրների հաղթահարման ուղղությամբ: Զարգացման չափորոշիչները կարող են օգտակար լինել պարզելու, թե որ ոլորտներում երեխաներն

ունեն դժվարություններ և ինչպիսի լրացուցիչ աջակցության կարիք կա տարիքային չափորոշիչների պահանջներին նրանց հասցնելու գործընթացում: Այնուամենայնիվ, նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժների հիմնական ուշադրությունը պետք է բևեռված լինի երեխայի առկա կարողությունների և հետաքրքրությունների վրա, ինչը թույլ կտա ընտրել և սահմանել կոնկրետ երեխայի կրթության և զարգացման նպատակներն ու դրանց հասնելու քայլերն ու մեթոդները:

Ներառական կրթության համատեքստում կիրառվելու է երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքներին արձագանքման եռաստիճան համակարգ (նախադպրոցական, տարածքային և հանրապետական): Օրենքի կիրարկման արդյունքում կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին մանկավարժահոգեբանական աջակցությունը ևս կտրամադրվի 3 մակարդակներում՝ նախադպրոցական, տարածքային և հանրապետական:

Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մասն է կազմում կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը, որն իրականացվում է երեխայի կրթության առանձնահատուկ պայմաններ սահմանելու համար: Երեխայի կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը երեխայի նախադպրոցական կրթական ծրագրերին մասնակցության դիտարկումն է, երեխայի զարգացման հնարավորությունների բացահայտումը, կրթության և զարգացման համար անհրաժեշտ առանձնահատուկ պայմանների սահմանումը:

Գնահատումն իրականացվում է երկու փուլով.

1. Նախադպրոցական մակարդակի գնահատում, որն իրականացվում է հաստատության մանկավարժների և մանկավարժահոգեբանական աջակցության խմբի կողմից՝ բացահայտելու կրթության գործընթացում երեխայի արդյունավետ մասնակցության սահմանափակումները, դրանք առաջացնող միջավայրային խոչընդոտող գործոնները և դրանց հաղթահարման խթանիչ գործոնները:

2. Տարածքային մակարդակի գնահատում, որն իրականացվում է Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի (այսուհետ՝ ՏՄԱԿ) կողմից՝ որոշելու երեխայի մոտ կրթության առանձնահատուկ պայմանի կարիքը՝ պայմանավորված գործունեության և մասնակցության այս կամ այն խանգարմամբ:

Նախադպրոցական մակարդակի գնահատումը սկսվում է մանկավարժի դիտարկումով, որը տեղի է ունենում երեխայի բնականոն միջավայրում՝ պարապմունքների ընթացքում, խաղերի, միջոցառումների ժամանակ: Մանկավարժը՝ որպես դիտարկում իրականացնող գլխավոր անձ, համագործակցելով նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժահոգեբանական աջակցության խմբի և երեխայի ծնողների հետ, որոշակի ժամանակահատվածում դիտարկման մեթոդի միջոցով հավաքագրում է համապատասխան տեղեկատվություն երեխայի կարողությունների, հետաքրքրությունների, անձնային որակների, կարիքների ու դժվարությունների, ուժեղ կողմերի, հասակակիցների հետ փոխհարաբերությունների և այլնի մասին: Ինչպես արդեն նշել ենք, երեխայի հնարավորությունների, կարիքների և զարգացման առկա մակարդակի դիտարկումը շատ կարևոր է նրա հետագա ուսումնառությունը պլանավորելու և կազմակերպելու համար: : Եթե երեխայի գնահատման արդյունքների վերլուծությունը վկայում է երեխայի գործունեության և մասնակցության որևէ խանգարման հավանականություն, ապա նախադպրոցական ուսումնական հաստատությունը ծնողի համաձայնության առկայությամբ դիմում է ՏՄԱԿ-ին երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի տարածքային մակարդակի գնահատում իրականացնելու նպատակով: Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը նրա զարգացման հնարավորությունների բացահայտման և կրթության կազմակերպման նպատակով իրականացնում են ՏՄԱԿ-ները՝ մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշների համաձայն: Գնահատման արդյունքում կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխային տրամադրվում են նախադպրոցական կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ՝ համաձայն Անհատական ուսուցման և զարգացման պլանի : Նախադպրոցական

ուսումնական հաստատություններն իրենց մշտական աջակցությունն են ստանալու իրենց ամրագրված ՏՄԱԿ-ների մասնագետների կողմից, ովքեր տարածքային մակարդակում գնահատելու են նախադպրոցական ուսումնական հաստատություններ հաճախող սաների կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիքը և տրամադրելու են շարունակական մանկավարժահոգեբանական աջակցություն թե՛ երեխաներին, թե՛ ծնողներին և թե՛ մանկավարժներին: Վերջիններս պարբերաբար կմասնակցեն կարողությունների զարգացման դասընթացների, կստանան խորհրդատվություններ ՏՄԱԿ-ի և Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի (այսուհետ՝ ՀՄԿ) մասնագետների կողմից:

Նշված համակարգի շնորհիվ ապահովվում է յուրաքանչյուր, այդ թվում՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի սահուն անցումը նախադպրոցական կրթության համակարգից դպրոցական համակարգ: Ոլորտում իրականացվող քաղաքականության արդյունքում նախատեսվում է ընդլայնել կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների որակյալ կրթություն ստանալու հնարավորությունները նախադպրոցական ուսումնական հաստատություններում, որը ենթադրում է երեխաների կողմից համապատասխան գիտելիքների, հմտությունների ձեռքբերում ապրելու, հասարակության մեջ լիարժեք դրսևորվելու և սահուն ու բարեհաջող դպրոցական կրթությանն անցնելու համար: Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին նախադպրոցական կրթության մեջ ներառման և նախադպրոցական կրթությունից դուրս մնալու հարցերում խիստ կարևոր է շահագրգիռ կառույցների հետ համագործակցությունը, ինչը թույլ կտա ոչ միայն վաղ հայտնաբերել այս երեխաներին, այլև նրանց հնարավորիս շուտ ընդգրկել կրթական գործընթացում՝ կանխարգելելով զարգացման հետագա դժվարությունների և խնդիրների առաջացումը: Այս համատեքստում կարևոր է առողջության առաջնային պահպանման կազմակերպությունների հետ նախադպրոցական ուսումնական հաստատությունների սերտ համագործակցությունը, ինչը հնարավորություն կտա փոխհամագործակցման միջոցով ավելի արագ բացահայտել երեխաների դժվարություններն ու կազմակերպել

համապատասխան միջոցառումներ ինչպես առողջապահական, այնպես էլ կրթական: Սոցիալական ծառայությունների հետ սերտ համագործակցությունը հնարավորություն կտա առավել շուտ բացահայտել ռիսկային ընտանիքներից եկող երեխաներին և արագ արձագանքել նրանց կարիքներին՝ իրականացնելով համապատասխան ուղղորդված աշխատանքներ[6]:

Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխայի զարգացման շրջանում պետք է ոչ միայն բարելավել նրա ընդհանուր վիճակը, այլ նաև նրան փոխանցել անհրաժեշտ գիտելիքներ, գործնական կարողություններ և հմտություններ: Այդ աշխատանքը կազմակերպելու համար, պետք է հաշվի առնել հատուկ մանկավարժական և կրթական գործընթացների կառուցվածքի հիմնական սկզբունքները.

- պետք է հաշվառել կրթության զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների առանձնահատկությունները,
- երեխաների ճանաչողական կարողությունների, դաստիարակության և ուսուցման բովանդակության զարգացնող պահանջների համապատասխանություն պահպանել,
- պետք է պահպանել տարբերակված մոտեցում, աշխատանքի հատուկ ձևեր ու մեթոդներ կիրառել՝ կախված երեխայի զարգացման առանձնահատկություններից,
- պետք է ստեղծվեն դաստիարակության պայմաններ՝ հաշվի առնելով Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հետաքրքրությունները, ընդունակություններն ու պահանջները:

---

[6] Ինչպես խթանել ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում, Մեթոդական ուղեցույց, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Երևան, 2020 էջ14

Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների սոցիալականացումը հասարակությանը հարմարվելու գործընթաց է: Ներառական կրթության միջոցով կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները ձեռք են բերում սոցիալական փորձ, ճանաչում են սեփական հնարավորություններն ու կարողությունները, ինչի շնորհիվ էլ կարողանում են հարմարվել սոցիալական կյանքին:

Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների զարգացման և կրթության գործընթացը ճիշտ կազմակերպելու համար, կարևորվում է մանկապարտեզի ֆիզիկական, ուսումնական և սոցիալական միջավայրը: Մանկավարժը պետք է կարևորի ուսումնական միջավայրի հարմարավետությունը և կարողանա ստեղծել ներգրավմանը նպաստող մթնոլորտ և միջավայր:

Կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ներառման համար, մանկապարտեզում անհրաժեշտ են մի շարք պայմաններ.

• միջավայրի պարբերաբար գնահատում, հարմարեցում ԿԶԱՊԿՈՒ երեխաներին, մանկապարտեզի ուսումնանյութական բազայի հարստացում: Խմբասենյակի կահավորում այնպես, որ այն լինի հարմարավետ, նաև՝ առանձին երեխաների համար յուրահատուկ հարմարեցումների ստեղծում

• ուսումնական գործընթացի հարմարեցում կրթության զարգացման առանձնահատուկ պայամանների կարիք ունեցող երեխաներին:

Հետազոտական մաս

Հետազոտական աշխատանքները կատարել ենք Արտիմետի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի՝ միջին խմբում, որտեղ ներառված է կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սան, որն ունի խոսքի և հաղորդակցման, ինտելեկտի, վարքի միջին աստիճան, ով գնահատվել է ՏՄԱԿ-ի կողմից: Նախկինում լինելով այլ խմբի սան, տեղեկացել էինք, որ նա չի ներառվում ոչ մի պարապունքների և խաղերի մեջ, խոսում է շատ ցածրաձայն և ամբողջ ուշադրությունը միայն մեքենաներն է: ՏՄԱԿ-ի կողմից կցված հատուկ մասնագետի և մեր համատեղ աշխատանքների միջոցով կարողացանք ներառել այդ սանին խմբային աշխատանքների և խաղերի մեջ: Ընտրեցինք խաղային մեթոդը, քանի որ խաղը հնարավորություններ է ընձեռնում բացահայտել բոլոր երեխաներին՝ անկախ զարգացման առանձնահատկությունների կամ դժվարությունների առկայությունից: Հաշվի է առնվել նաև այն, որ նախադպրոցական տարիքում երեխաների ուսուցան և զարգացման համար հիմնական միջոցը խաղային գործունեությունն է, մանկապարտեզներում բազմազանությունների ընդունման և դրական փոխհարաբերությունների կառուցման ուղղությամբ իրականացվող աշխատանքներում ևս մեծ դեր ունեն խաղ-վարժությունները[7]: Խոսքը և հաղորդակցումը զարգացնելու համար օգտագործեցինք նկար-քարտեր, որտեղ պատկերված էր գործողություններ և պետք է դասավորեր ըստ հերթականության: Հանձնարարությունը կատարեց ոգևորված, քանի որ այդ մեթոդը իր համար նոր էր և հատաքրքիր էր: Իհարկե մի փոքր օգնեցինք և ուղղություն տվեցինք: Ինտելեկտը զարգացնելու համար կիրառեցինք Կյուիզիների փայտիկները: Նպատակն էր զարգացնել գունային

[7] Ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում, Խաղեր և վարժություններ, Մեթոդական ուղեցույց, Ձեռնարկ մանկավարժների համար, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն Երևան, 2022, էջ 7

իմացությունը, ամրապնդել բարձր, ցածր, բարձրությամբ հավասար հասկացությունները, ինչպես նաև զարգացնել կառուցողական հմտությունները։

Նշեմ նաև, որ ներառական կրթության կազմակերպման ընթացքում կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սանի մոտ նկատվել էր չենթարկվելու խնդիր, անուշադրություն, ագրեսիվ և կամակոր վարք, որը երբեմն խանգարում էր խմբում պարապունքի կազմակերպման ընթացքին, իր վարքով առանձնանում էր, դա մի փոքր անհանգստացնում էր, բայց ամեն բան հաղթահարելի է։



Նակարները տեղադրելու համար ստացել ենք ծնողներից թույլտվություն

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրության և հետազոտության արդյունքում եկանք այն եզրակացության, որ

- ներառական կրթության դեպքում մենք՝ մանկավարժներս, պետք է առաջնորդվենք ոչ միայն նախադպրոցական մանկավարժության մեթոդներով ու սկզբունքներով, այլ նաև՝ առանձին երեխաների հետաքրքրություններով: Մենք պետք է կարողանանք, նախ և առաջ հայտնաբերել այն խոչընդոտները, որոնք խանգարում են սանի զարգացմանն ու կրթություն ստանալու գործընթացին, այնուհետև մշակենք այնպիսի ուսումնական, մեթոդական պլաններ, որոնք ուղղված կլինեն այդ խոչընդոտների հաղթահարմանը:
- Նախադպրոցական ուսումնական հաստատություններում ներառական կրթության ճիշտ կազմակերպումը հեշտացնում է կրթության զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սաների սոցիալականացման գործընթացը, նրանք զարգանում ու կրթվում են իրենց հասակակիցների շրջապատում, ճանաչում են իրենց ուժեղ կողմերը, ձեռք են բերում սոցիալական փորձ, ճանաչում են սեփական հնարավորություններն ու կարողությունները, ինչի շնորհիվ էլ կարողանում են հարմարվել սոցիալական կյանքին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ինչպես խթանել ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում, Մեթոդական ուղեցույց, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Երևան—2020

2. Հայաստանի Հանրապետության օրենքը կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=154530:

3. Ներառական կրթություն. Ուսումնամեթոդական ձեռնարկ. -Երևան: 2017. 146 էջ:

4. Ներառումը նախադպրոցական ուսումնական հաստատությունում, Խաղեր և վարժություններ, Մեթոդական ուղեցույց, Ձեռնարկ մանկավարժների համար, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն Երևան 2022

5. Ներառող-դասավանդում-մեթոդական-ձեռնարկ մանկավարժների համար, Երևան 2023, 238 էջ

6. Հղում՝https://hy.wikipedia.org/wiki/%D5%86%D5%A5%D6%80%D5%A1%D5%BC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%AF%D6%80%D5%A9%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6